# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## (ԹՈՒՂԹ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՈՐ ԳՈՇՆ ԿՈՉԻՒՐ.)

(Շարունակութիւն) *

Սոքա ամենեքեան ունին զանազան սովորութիւնս և կարգս. յոյնք և վիրք զպատկերագրութիւն առաւել պատուեն, և հայք զխաչ. յոյնք և վիրք բամբասեն զհայք վասն տաւնի սրբոյն Սարգսի և առաջաւորացն պահոց, զոր և ասորիք տաւնեն. ի տաւնս առնել մատաղ՝ ամբանին[1] հայք հրէաբար առնել, և զանգակ[2] (ու)նել ի բուրուառս[3]. քահանայք հայոց և (ասոր)ոց[4] փիլոնով վարեն, իսկ այլ ազգ (ոչ), և ոչ վեղարով կրաւնաւորք. Յասորոց են որ թլփատութիւն ունին, որպէս նեստորականքն, և են որ խոստովանութիւն յանցանաց ոչ ունին. Յոյնք բազում մկրտութիւն ունին: Է և այլ ինչ բազում, զոր թուել ոչ կարեմք, զպելիրկի[5] և զսուրխանի և զայլոց,[6] զաւանդութեանց[7], զակոբկի[8], զմելքեկի, զգրիգորկի[9]. Զայս ամենայն բաժանմունս տեսաք՝ է որ յամբարտաւանութենէն եղև և ի սատանայէ[10], է և յանգիտութենէ[11], է և յանձեռնահասութենէ. բայց ամենայնըն[12] յանձնիշխանութենէ, զոր և առ արտաքին իմաստասէրն[13] տեսաք. զի բանք նոցա և[14] իմաստութեան հակառակ միմեանց են, որպէս Պղատոնին և Արիստոտելին, Որփէոսին և Ամոնին, Զենոնին և Հոմերոնին. Այլ զի մի յաճախեսցի զԵռաք, զԱնաքսագորաս և զԴիմոկրատոս, և զի անթիւ են բանք նոցա հակառակ միմեանց, որ ինչ վասն աստուածոց և վասն հոգոց և մարմնոց. որք ի դասս բաժանեցան և յանուանս, որպէս փիլիսոփայքն և ճարտասանք,[1] քերականք և քերթողք, ճեմականք և շնականք, և այլք այսպիսիք. Ըստ որում առ մահմետականսն է տեսանել բաժանեալք այսպիսիք, որպէս մուշարածին և ալարին և[2] ռափատին[3] և այլք. Նոյն է և առ հրէայսն, որպէս փարիսեցիք և սադուկեցիք և սամարացիք, և այլք մելքիսեդեկեանք, որ ասին մլհուդ[4], Նաև ի հեթանոսս բազմաստուածութեան[5] նոյն բան է. Եւ թէպէտ և Քրիստոս արար զհաւատացեալ[6] մի հաւտ, այլ զանձնիշխանութիւնն ոչ եբարձ և զաշակերտութիւնն ի կամս ազատան արար ասելով՝ Որ ոք կամի իմ աշակերտ լինել, և Որ կամի աղաւթել, և Որ կամի ողորմութիւն առնել, և այլն. ուստի յայտ է, թէ մեր կամաւք խնդրէ զպաշտաւնն[7] և զառաքինութիւնն. Եւ այդ եղև պատճառ անձնիշխանութեամբ առնել զկամս անձանց, զոր անհնար տեսանեմք զգալն ամենեցուն ի միաբանութիւն վասն հնացեալ սովորութեանցն՝ յաղագս[8] խափանելոյ բազմաժամանակեայ տիեզերական ժողովոյ. և զոր գրեալ է ի կանոնս, երկիցս և երիցս[9] ժողով լինել յամի՝ արդ ցուցից[10] թէ որպէս հնար է միաբանիլ, և կամ որոց ազգաց և զինչ է, որոց ոչ լինի միաբանութիւն,[11] և թէ ոչ լինի՝ զինչ առնելի է. Նաև զայն ցուցից, թէ աւանդութիւնք որպիսի պատճառք եղեն.

Եւ սկսցուք արդ ի խոստովանութիւն Երրորդութեանն, Հաւատամք ի Հայր Աստուածութիւնն, որպէս խոստովանեցին ժողովեալքն ի Նիկիայ[12] և յայլ սուրբ ժողովն[13], և որպէս ուսեալ եմք ի հին և ի նոր կտակարանացն՝[14] անսկիզբն[15] և անվախճան է Աստուածութիւն,[16] և բարի[17] բնութեամբ. և նա ի[18] պատճառ ծնելութեան Որդւոյ անժամանակաբար: Այլ ծնունդ և որդի ասել զնոյնութիւն

---

* Տես Արարատ 1900 թ. համար Ժ. եր. 497:

1. ամբաստանին.
2. զանկակ.
3. Ա. ի բուրվառս. Բ. ի բուրվառս.
4. ասորին.
5. զպէղէսկի.
6. Ա. այլոց.
7. աւանդութեանց.
8. զյակոբկի.
9. զգրիգորի.
10. ի սատանայէ.
11. Ա. անգիտութենէ է. Բ. անգիտութենէ.
12. ամէն.
13. իմաստակէն.
14. է.

---

1. է ճարտասանքն.
2. ա. մուշտակրանկինաշարին բ. մուշտարանկինաշարին
3. ռամարին.
4. մկնուց.
5. բազմաստուածութեանն.
6. զհաւատացեալսն.
7. զպաշտօն.
8. եւ յաղագս.
9. երից.
10. ցուցին.
11. ա. չինի զինչ ի միաբանութիւն.
12. ի Նիկիա.
13. ժողովսն.
14. կտակարանաց.
15. ա. անզգիզբն. բ. անսկիզբն.
16. աստուածութիւնն.
17. բարի է բնութեամբ.
18. ա. նա է, բ. նայ է.

բնութեանն ցուցանէ, մերով[1] բնութեամբ և անուամբ հնարաւորէ[2] գիրք յայտնել[3] զանճառ բնութիւն[4] Աստուծոյ, զի զնոյնութիւն ունի զՀաւր ամենայն[5] ինչ. սակաւ տամք զնշանակ, զի մի յերկարութիւն լիցի ճառի. Եւ Հոգին սուրբ եղող[6] աւի ի Հաւրէ և ոչ ծնունդ, զի մի կարծիցի Բ. որդի և եղբայր Որդւոյ. և թէ Որդի բնութենէ Հաւր է,[7] և Հոգի. ապա հաւասարակից է Որդւոյ Հոգին՝ մի աստուածութիւն և մի պաւրութիւն և մի արարչութիւն և մի երկրպագութիւն յամենայն հաւատացելոց. Այլ ի լրման[8] ժամանակի եկն Որդին և առ մարմին ի Մարիամայ կուսէ*, և ճշմարտեալ,[9] զի ոչ նախանձեցաւ Աստուածն ընդ Ադամա, զոր ասաց սատանայ, թէ գիտէր Աստուած, թէ ուտես[10] ի ծառոյ անտի՝ աստուածանաս. և վասն այնորիկ արար զորդին Ադամա աստուած մարմնանալովն: Եւ դարձեալ զի յանկացան արդարքն տեսանել զԱստուած. և զի անտեսանելի է Աստուած, որպէս ասաց Մովսէսի՝ Ոչ ոք տեսանէ (զերեսս իմ) և կարիցէ ապրել,** վասն այն առ[11] մարմին տեսանելի, ըստ որում էրանեաց զառաքեալսն Քրիստոս. և այլ ազգ՝ զի զպարտսն Ադամա հատուսցէ Աստուծոյ Հաւր, որում հնազանդ եղև Աստուծոյ Հաւր մինչև ցմահ և մինչև խաչի, ըստ առաքելոյ.*** Եւ զի՞նչ էր այսմ խորհրդոյ գործարան. կոյսն, որպէս ասէ մեծն Բարսեղիոս[12] ի ճառի ծննդեանն. և զի՞նչ աւրինակաւ Աստուած ի մարմնի. որպէս հուր յերկաթ[13], զի երկաթ սև է[14] և ցուրտ, և հուր ջերմ է և լուսաւոր. և որպէս ջերմութիւնն և զցրտութիւնն բառնայ և լուսաւորութիւն զսևութիւնն՝ սոյնպէս[15] զմարդկային մարմնոյն զտկարութիւնն և զաղեղութիւնն աստուածութիւնն գեղեցկացոյց և զաւրացոյց. Թէպէտ երկաթ զբնութիւնն ոչ փոխեաց, այլ ի գոյնն[1] դարձաւ հրոյն և ծածկեցաւ, սոյնպէս արար աստուածութիւն՝[2] զբնութիւն մարմնոյն ոչ կորոյս, այլ յիւրն միացոյց. և հուր զայրեցող բնութիւնն ոչ փոխեաց յերկաթ, այլ զնա լուսաւորեաց, և երբեք երկաթ ի հուր.[3] այսպէս աստուածութիւնն ի մարմնոյ տկարութիւն ոչ դարձաւ, այլ զնա աստուածացոյց: Ըստ այսմ աւրինակի երկու բնութիւնք[4] միացան, և որպէս լուսաւորի աւդ յարեգակնէն[5]՝ աւդ կապուտակ է և լուսաւորի, աւդ ոչ լուծանի, այլ տանու ի լուսոյ, տկարն յաղթի ի հզաւրէն[6], և հզաւրն ոչ ի տկարէ, և որպէս սար ներկեալ ծիրանեաւ՝ ծածկի[7] սպիտակն և եղև մի ծիրանի,—ոչ Բանն մարմին եղեալ[8] որպէս ջուր սառուցեալ, զի այս Եւտիքեայն է, այլ Բանն մարմին եղև, զի էառ զինչ ի մարդ, բաց[9] ի մեղաց, ըստ աւետարանչին. զի բուռն եհար զզաւակէն Դաւթի*, վասն որոյ և Որդի Դաւթի կոչեցաւ: Եւ որպէս հարքն ի Նիկիա խոստովանեցին, զի էառ մարմին և հոգի և միտք, և ոչ որպէս ասաց Ապողինար[10], թէ տեղի հոգւոյն աստուածութիւն[11] էր. Թէպէտ երկու էր բնութիւնն, մի որդի խոստովանեն վասն անճառ միութիւն[12] ասելով. հաւատամք ի մի Տէր Յիսուս Քրիստոս, նմանապէս յԱստուծոյ Հաւրէ ասացաւ. Դա է որդի իմ սիրելի**, և ոչ դոքա, զի նոր խառնումն ասացաւ ըստ Աստուածաբանի. Զիա՞րդ երկու բաժանի, զի որ յերկուս բաժանէ յետ անճառ միաւորութեանն, զնեստորին խորհել[13] երկուս ասելով[14] որդիս. զի այնպիսի խոստովանութեամբն երրորդութիւն[15] ոչ մնայ[16] ուղիղ խոստովանել[17]. Երկու է մարդ՝ հոգի և մարմին, այլ մի ասի վասն անքակ միութեանն. զի բազում բնութիւնքն որ ի մարդ՝ հող և ջուր, աւդ և հուր, ի մի մարմին եկեալ, մի կոչի մարմին. այսպէս

1. զնոյնութիւն բնութեանն ցուցանէ մերով.
2. հնարաւորութիւն.
3. յայտնել.
4. բնութիւնն.
5. զամենայն.
6. եղող.
7. ի Հօր բնութենէ է.
8. ի լրումն.
9. ի ճշմարտել.
10. յորժամ ուտես.
11. վասն այնորիկ էառ
12. Բասիլիոս.
13. ա. երկաթ.
14. սեաւ. ա. օ. է.
15. սոյնպէս եւ.

* Գաղտ. Դ. 4.
** Ելից Գ. 20.
*** Փիլիպ. Բ. 8.

1. ի գոյն.
2. աստուածութիւնն.
3. երկաթի հուր.
4. բնութիւնսն.
5. յարեգակնէ.
6. ի հզօրէ.
7. ա. ծածկէ. բ. ծածկի.
8. եղեւ.
9. բայց.
10. Ապողինար.
11. ի տեղի Հոգւոյ աստուածութեանն.
12. միութեանն.
13. խորհել.
14. ասել.
15. խոստովանութեամբ երրորդութիւնն.
16. ա. մնայ.
17. խոստովանելն.

* Եբր. Բ. 16.
** Մատթ. Գ. 17.

Աստուած և մարդ՝ մի ա[ն]աստուած որդի. Արդ, զայս ասելով զմարդկութիւնն ոչ ուրանամք, այլ խոստովանիմք զմարմին [1] աստուած. և թէ մարմինն Աստուած էր, զի՞ [2] դարձեալ մարդ և ոչ Աստուած. և թէ [3] Աստուած՝ կամքն Աստուծոյ և գործն Աստուծոյ, և ոչ մարդոյ. և եթէ զքաղց և զծարաւ և զվաստակ և զերկեղ [4] և չարչարանս [5] և զմահ ասել Աստուծոյ զարհուրես. ընկա՛լ զասացեալսն ի հարցն, զի կամաւ և թոյլ տալով կրեաց զայդ ամենայն կիրս, և ոչ հարկել [6] ի կրից. վասն այն զկնի Ի. աւուրց քաղցև [7], յորժամ թոյլ ետ. Զայդ աւրինակաւք [8] մարմնոյն կրել [9] ասէ Աստուածաբանն, և յաւելութիւն [10] իբրև զԱստուած. զմարմին [11] կոչէ Աստուած. նաև զնշանն զոր առնէր, ի հայր վերաբերէր [12]՝ զնա պատուելով, և ոչ տկարանալով. զի այդ ամենայն միութեան անաւրինութեանն [13] տան սուրբքն. Տարակուսիս ի չարչարանս [14] և ի մահն՝ մարմնոյ [15] միայն լինել, մի՛ մոռանար զմարմին [16] Աստուած և Աստուծոյ զմահն՝ ո՛չ Բանին, այլ միութեանն անաւրէնութեանն [17]. զի ի մահն բաժանելն [18] կամ ի չարչարանսն՝ այդ Նեստորի է, որ յետ յարութեանն տա [19] Տեառն փառս. այդ և սրբոցն լինելոց է յետ [20] յարութեանն. Ի չարչարանս առաւել տարակուսիս, զի մի աստուածութեանն տացի. հարկանի երկաթ հրացեալ, այլ հուր ոչ չարչարի. տանջեա՛ զանեղի, ուր լոյս արեգականն է՝ զանի երկիրն [21], և ոչ լոյսն. տանջի և մերս մարմին, այլ հոգին անմահ մնայ [22]. Թէպէտ ինքն է որ տայ սգալ ցաւոց մարմնոյ, այլ ըստ բնութեանն անչարչարելի է. թէ արարածս այդպէս՝ արարիչն որչա՞փ. Սիմէոն [1] զքառասնօրեայն Տէր մահու և կենաց [2] խոստովանի, և Եսայեաս ի ծննդեանն ընդ մեզ Աստուած քարոզէ, և Նեստոր և համախոհք նորին յետ յարութեանն. զի որպէս Աստուծոյ ծնունդն ի կուսէ Աստուծոյ էր՝ նմանապէս և մահն, զի Աստուած էր մարմինն. զի ինքնակամ աւանդէր զհոգին. զի ի մարդո [3] մահ [4] արեգակն ոչ խաւարի և ոչ յառնեն մեռեալք, և ոչ այլ եղեալ նշանքն. զի այդ ամենայն Աստուած քարոզէր զխաչեալն. Նաև ի նշանս առնելն [5] Աստուածութեան [6] յայտնէր և զմարդկութիւն [7] ցուցանէր. զի թուքն մարմնո [8] էր [9], երաց զ'ի ծնեալ [10] կոյրն՝ լուսաւորել [11] բանին միացելոյ. զի ոչ յատուկ թուքն մարմնո [12] առ նայ [13] էր, այլ որպէս ամենայն նորայքն աստուածայինք [14] նշանքն. նոյնպէս և այս. Եւ թէ յետ յարութեանն աստուածացաւ, զիա՞րդ աստուածաբար կանխաւ զնշանսն [15] առնէր, որ է միութեան [16] անաւրինութեանն [17]. Ի մարգարէից, յառաքելոց և ի հայրապետաց յաճախէ զվկայութիւնս առնուլ, նաև յաւրինակաց գրոց [18] կանխաւ. վասն այնորիկ զպարզ և զգիտելին [19] ամենեցուն յիշատակեցաք, և այլ զնոյն յաւելումք. Աստուածաբանն [20] Աստուած խաչել [21] ասէ և այլքն. ոչ Բանն [22] ասէ խաչել [23], այլ մարմինն [24] անուանէ [25]; Եւ թէ Աստուած է մարմին [26], որպէս

1. զմարմինն.
2. զիմա՞րդ.
3. Երկ.
4. զերկիւղ.
5. զչարչարանս.
6. հարկեալ.
7. քաղցեաւ.
8. օրինօք.
9. կրեալ.
10. յաւելու բէ.
11. զմարմինն.
12. վերաբերէր.
13. միութիւն անորէնութեանն.
14. ի չարչարանսն.
15. մարմնոյն.
16. զմարմինն.
17. անորէնութեան.
18. բաժանելն.
19. ա. տայ.
20. եւ յետ.
21. ա. ի յերկիրն.
22. բ. մնա.

1. Սիմէոն.
2. կենաց.
3. ի մարդոյ.
4. ա. մահն.
5. առնելն.
6. զաստուածութիւնն.
7. զմարդկութիւնն.
8. մարմնոյն.
9. ա. օ. բ. է.
10. բայց զի ի ծնէ.
11. յուսաւորելոյ.
12. մարմնոյ.
13. նա.
14. աստուածային.
15. զնշանս.
16. միութիւն.
17. անորէնութեանն.
18. բ. գրելոց.
19. զգիտելին.
20. Աստուածաբան.
21. խաչեալ.
22. զԲանն.
23. խաչեալ.
24. զմարմինն.
25. Աստուած (հին ձեռագրում ջնջը ճերած).
26. մարմինն.

և է իսկ, ընդէ՞ր տաս մարմնոյն, որպէս մարդո [1], կամ զկամս, կամ զկիրս, կամ ներգործութիւնս զի այդ ամենայն առ Քրիստոս իբր Աստուծոյ, և [2] որպէս մարդոյ է. զի ժողովք [3] Քաղկեդոնի և տամարն [4] Լևոնի և երկուս կամս և երկուս ներգործութիւնս խոստովանի։ Զի թէ այդպէս է, զի՞արդ բոլորն [5] Աստուած. զի կամք մարդո [6] հակառակ է կամացն Աստուծոյ, և լինի առ [7] Քրիստոս աստուածութեամբն կամակից Հաւր ինքեան [8], և մարդկութեամբն հակառակ ինքեան և Հաւր։ Զի և գործ մարմնոյ յոյժ աւտար է ի գործոց Աստուծոյ. զի գործ Աստուծոյ ամենայն բարի է. և սակաւուց է բարի գործ մարդո. զի մարդ բարի ի բարի գանձուց սրտէ [9] բխէ [10] զբարի, և մարդ չար զչարն *, Եւ եթէ ոչ խափանեաց Քրիստոս ի մարմնոյ զկամս [11] մարմնոյ և զներգործութիւնս՝ գտանի և առ Նա [12] կամք չար և գործք չար, և զի՞արդ ասէ մարգարէն. Ոչ արար մեղս և ոչ գտաւ նենգութիւն ի բերան Նորա **. և զի՞արդ ինքնին վկայէ Տէր [13]. Գայ իշխան աշխարհիս այսորիկ և յիս ինչ ոչ գտանէ յիւրոցն։ Վասն այդ և Ապողինար մոլորեցաւ ասել Քրիստոսի միտս չունել, զի անհնար տեսաւ մտաց չմեղանչել. այլ զի զկամս և զներգործութիւնս յիւրըն դարձոյց կամս [14], վասն այն և մի Քրիստոս և մի Որդի քարոզի ի սրբոյ հարց. մի Տէր Յիսուս Քրիստոս ի Նիկիայ [15] քարոզի՝ չարչարեալ, խաչեալ, թաղեալ և [16] յարուցեալ. զմի և զնոյն ասեն, և ոչ յերկուս բաժանեն։ Եւ թէ յոյնք պատճառեն Եւտիքեայ [17] առ աչաւք ասելն զերկու բնութիւնն՝ զդաւանութիւնն [18] ընդէ՞ր զՆեստորին հաստատեն. բաւական էր հարցն ասելն [19] չարչարեալ, խաչեալ. զի առ աչաւքն չարչարել և խաչել [1] ոչ կարէ։ Եւ մի ոք կարծիցէ զհայք մի բնութիւնն խոստովանել [2] ուրանալ զմինն՝ կամ զաստուածութիւնն, կամ զմարդկութիւնն, այլ յետ միաւորութեանն ոչ բաժանեն յերկուս, որպէս ամենայն սուրբք։ Եւ որ ոք ընդունի զժողովն Քաղկեդոնի՝ յայտնապէս Նեստորի կոչի աշակերտ, մարդապաշտի. այլ զի մեք զհարցն աստուածազգեստ [3] ունիմք զխոստովանութիւն, զոր սակաւուք յիշատակեցաք, և դարձեալ յաւելումք։ Զի սուրբն Աթանաս մի բնութիւն ասէ մարմնացելոյ Բանին Աստուծոյ՝ ի թղթին, որ որ առ Ապաւղինար. նմանապէս և Կիւրղոս ասէ մի բնութիւն՝ ի թղթին, յորժամ եհարց զնա Սիւնկունդաս [4] եպիսկոպոսն [5] Կեսարու։ Դարձեալ գրէ սուրբն Կիւրեղ առ Լեգէոս [6] քահանայ. Որդ ասեմք, ասէ, մի բնութիւն, և միաւորութիւն խոստովանիմք. զի ոչ մեկուսին ի միմեանց միաւորեալքըն, այլ է մի Որդի այնուհետև և մի բնութիւն Նորա։ Դարձեալ գրէ առ բարեպաշտ թագաւորն Թէոդոս. Թէպէտ ի զանազանից, ասէ, և յաննմանից [7] եկեալ առ միմեանս բնութիւնքն՝ մի Քրիստոս և մի Որդի և մի բնութիւն խոստովանելի է, հանդերձ անեցելովն. Դարձեալ գրէ առ Ակակ եպիսկոպոսն Մելիտինոյ [8]. Երկու բնութիւնս միաւորեալս ասեմք, իսկ յետ միաւորութեանն մի. Իսկ արդ, զի մի է բնութիւնն և մի և [9] ներգործութիւնն, վկայէ երանելին Աթանաս ի չորրորդ ճառին որ առ Արիոս. Եւ բանն, ասէ, զմարմնոյն [10] բարձեալ ունէր զտկարութիւն, զի Նորա և մարմինն և մարմինն [11] գործակից աստուածութեանն գործոյ. զի Նովաւ լինէր, զի Աստուծոյ մարմին էր. Եւ Գրիգոր Նիւսիայ [12] յերկրորդ ճառին որ ընդդէմ Եւնէմիոսի [13]՝ Քանզի ներգործէ, ասէ, որպէս ճշմարիտ Աստուած ի ձեռն իւրոյ մարմնոյն զամենեցունց փրկութիւն. որպէս ձայնին կամ գործոյն մարդկաւրէն եկեալ յառաջ. իսկ ի ներքս ծածկեալն իմանի՝ զաստուածութիւնն ցուցանել [14], Գրէ և Յուլիոս եպիսկոպոսապետ... [15] ասէ. Եւ ոչ

1. մարդոյ.
2. եւ ոչ.
3. ժողովն.
4. ա. տումարն. բ. տոմարն.
5. ա. բոլոր.
6. մարդոյ.
7. օ. առ.
8. եւ ինքեան.
9. որտի.
10. բղխէ.
11. ա. զկամ.
12. եւ առանց.
13. ա. Տէրն.
14. ա. կամք.
15. ի Նիկիա.
16. օ. եւ.
17. զեւտիքեայ
18. զդաւանութիւն.
19. ա. առել.

* Մատթ. ԺԲ. 35.
** Եսայի ԾԳ. 3.

1. խաչել եւ չարչարել.
2. ա. խոստովանի.
3. զաստուածազգեստիցն.
4. Սեկունդոս.
5. եպիսկոպոս.
6. էգեոս.
7. եւ յանանմանից, առէ.
8. եպիսկոպոս Մելիտինոյ.
9. է.
10. ա. զմարմնոյ.
11. մարմին.
12. ա. Նիւսայ.
13. ա. Եւնոմիենոսի բ. Եւնոմիոսի.
14. ցուցանել.
15. բուն ձեռագրի մէջ «Հռոմա» բառի կէսը կտրած է տակից կազմելիս. միւսներ «Հռոմայ».

մի ինչ անջատումն Բանին և մարմնոյ նորա ընդ(ի) յԱստուածային գիրս, այլ է մի անձնաւորութիւն, մի ներգործութիւն, մի դէմն՝ բոլորովին Աստուած և բոլորովին մարդոյն [1] ինքն Յիսուս Քրիստոս։ Եւ Յովհաննէս Ոսկեբերանն ասէ. Միով ներգործութեամբ և միով զօրութեամբ զբազմատեսակ ախտս բժշկեաց։ Եւ վասն կամացն ասէ Աթանասիոս. Ծնաւ ի կնոջէ, զի զառաջին ստեղծուած զմարդկային կերպարանքն ինքեամբ հաստատեալ ցուցմամբ մարմնոյ, առանց մարմնականաց կամաց և խորհրդոց [2] մարդկայնոց՝ ի պատկեր նորոգութեան [3] ի կամս աստուածութեանն միայնոյ։ Եւ Անթիմոս եպիսկոպոսապետն Հռոմայ գրէ. Զի էր [4] ծանուցեալ, ոչ արդեօք զՏէր [5] փառաց ի խաչ հանէին *. և յայտ է թէ աստուածութեանն ի խաչ ելանել անհնար է և ոչ զչարչարանաց զմարդկայնոց [6] զփորձ առնուլ. թէև զայսօրիկ կրէր, այլ և [7] վասն անճառելի միաւորութեանն [8] մարմնոյն և աստուածայնոյ բնութեանն. վասն այսորիկ [9] Աստուած ասի չարչարելի, ուստի և մի կամս խոստովանիմք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. քանզի կամք այլ և այլ ոչ եղեն Փրկչին մերոյ, վասն զի վեր [10] քան զաւրէնս բնութեան մարդկայնոցս [11] ծնաւ, Թէև գրեալ է. Ո՛չ եկի առնել զկամս իմ, այլ զկամս առաքչին Հաւր **, և Ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս դու կամիս, Հայր՝ *** ո՛չ են այս այլ և այլ կամաց, այլ ըստ առեցելոյն մարդկայնոյն և ըստ տնաւրէնութեանն այսորիկ վասն Տեառն ասացան, զոր եւ աւրինակ բարի Վարդապետն մեր, զի զհետ շաւղաց նորա գնասցուք [12], և ոչ ընդ իւրն իւրաքանչիւր ոք, այլ յամենայնի յաւէտ Տեառն նախապատուեսցին կամք։ — Այլ յաղագս անճառ միութեանն բազմաց սրբոց յաճախեն բանք՝ Կիւրղի, Աթանասի, Բարսղի, Աստուածաբանին [13], Նիւսացւոյ [14], Եփրեմի, և վասն համառաւտելոյ չառաք այժմ. Յիշեմք միայն զԳաբրիէլի զասեալն [1] առ կոյսն. Որ ծնանելոցն է ի քէն սուրբ է և որդի Բարձրելոյ կոչեսցի *. ոչ եթէ բնութիւնն որ ի նմանէ [2], այլ թէ՝ որ ծնանանելոցն է ի քէն, և նա փրկեսցէ զժողովուրդս [3] իւր ի մեղաց իւրեանց **. Եւ առ հովիւսն ասէ. Ծնաւ ձեզ այսաւր Փրկիչ ***. ոչ եթէ բնութիւնն ի ծնեցելումն, այլ որ ծնաւն. Եւ Մկրտիչն աղաղակէ. Ահա Քրիստոս [4] Գառն Աստուծոյ, որ բառնա զմեղս աշխարհի ****. ոչ բնութիւնն որ ի նմայ, այլ զոր տեսանէքս [5]. Եւ Պետրոս պատասխանի առնէ. Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ *****. ոչ եթէ բնութիւնդ որ ի քեզ, այլ եթէ դու ես Որդի Աստուծոյ [6]. առ որս [7] ասաց. Հայր իմ յայտնեաց քեզ զայդ, և երանեաց զնա։ Պաւղոս ըստ մարմնոյ Աստուած ասէ, զոր ի վերայ ամենայնի աւրհնեալ յաւիտեան [8]. Յովհաննէս աւետարանիչն գրէ. Ձեռք մեր շաւշափեցին զբանն կենաց ******. ոչ առանց մարմնոյ զբանն ասէ, Թովմաս [9] զկողսն շաւշափէր [10], եղտեղի բևեռացն, և Տէր Աստուած քարոզէր *******, Եւ առ Փիլիպպոս ասաց Տէր. Որ ետես զիս, ետես զՀայր. ոչ զմարմինն միայն ասաց, այլ զմիութիւն անաւրինութեանն [11]; Եւ Հայր [12] Յորդանան վկաեց [13]. Դա [14] է որդի իմ սիրելի ... [15] բնութիւնդ որ ի դմա. զնոյն ձայնէ և ի Թափաւր [16], Զիա՞րդ և ի պարզ բնութիւն Երրորդութեանն զչարչարելին յաւելուն՝ առնելով չորրորդութիւն, և ոչ զարհուրին. Եւ զի [17] մարդ ... [18] և մարմին,

1. մարդ նոյն.
2. խորհրդոյ.
3. նորոգութեան.
4. էք էր.
5. արդեօք զՏէրն.
6. մարդկայնոց.
7. օ. եւ.
8. միաւորութեան.
9. այսորիկ եւ.
10. ի վեր.
11. մարդկան յոյս.
12. ննջեցուցն.
13. Աստուածաբանի.
14. Ա. Նիւսացւոյ Բ. Նիւսացոյ.
* Ա. Կոր. Բ. 8.
** Յովհ. Ե. 30.
*** Մարկ. ԺԴ. 36.

1. զասելն.
2. ի նմա.
3. զժողովուրդ.
4. օ. Քրիստոս.
5. Ա. տեսանէքդ.
6. օ. ո՛չ եթէ—Որդի Աստուծոյ.
7. առ որ.
8. յաւիտեանս.
9. Թովմաս.
10. շօշափեաց.
11. անօրէնութեանն.
12. Ա. Հայրն.
13. Յորդանանն վկայեաց.
14. Դայ.
15. ոչ.
16. Ա. որ ի Թափօր. Բ. որ ի Թաբօր.
17. Ա. 0.
18. հոգի ե.
* Ղուկ. Ա. 35.
** Մատթ. Ա. 21.
*** Ղուկ. Բ. 11.
**** Յովհ. Ա. 29.
***** Մատթ. ԺԶ. 16.
****** Ա. Յովհ. Ա. 1.
******* Յոհան. Ի. 27.

և խոստովանիք զկատարեալն առնուլ, զի մի զԱպաւղինարին[1] ախտանիցէք[2], և զի այլ է բնութիւն մարմնոյ և այլ[3] բնութիւն հոգւո[4]՝ զո՞րն արդե[5] .... և զո՞րն եթող, զի մի երեք բնութիւն լիցի, [6] Ոչ առ իմաստունն[7] յիմար բանին ըստ ուղեղ բանին[8] երկու բնութեանցն միութիւն. իբր ճառագայթ ճրագի արեգականն հասելոյ[9] պայծառութիւն[10], և առանց ի բաց բարձելոյ՝ ոչ ուրեք մնա[11] իւր . . . . թիւն[12], այլ հզաւրագունին յաղթեալ յինքն փոխարկէ զաղատագունի[13] զլոյսն, և ոչ ինչ ընտրութիւն և կամ միջոց, կամ տեսութիւն ճառագայթից մնայ. այսպէս ոչ մարմնական բնութիւնն[14], կամ կամաց, կամ ներգործութեանց թիւ մնայ ի մարմնացեալ Բանին Աստուծոյ, քանզի բոլորն Աստուած և Աստուծոյ կամք. և ներգործութիւն սոսի, զի մնաց Երրորդութիւնն պարզ և անզանազանապէս[15] անխառն ի նիւթականաց:

Իսկ զաւունս ծննդեանն[16] Քրիստոսի տաւնեմք, որպէս և գրել է յաւետարանին Ղուկայ[17] և ի կանոնս առաքելոցն[18]՝ յունվարի ի Զ. աւուր ծննդեանն և յայտնութեանն[19]. և Յակոբոս[20] և Կերեղ[21] այնպէս կարգեալ են, և Ռստակէս ի ժողովոյն Նիկիայ. ի Հայրապետէն Երուսաղեմի այնպէս ընկալաւ զեդեալ ընթերցուածն յառաքելոցն և երեր ի Հայս. նոյնպէս և այլ Հայրապետք ազգաց: Ըստ այսմ աւրինակի և աւետիքն պատահէ ի Զ.[22] ապրիլի, և ծնունդն յունվարի ի Զ. և զկնի Լ. ամի մկրտութիւնն դարձեալ ի յունվարի ի[23] Զ. պատահեաց, վասն այն ի միասին կարգեաց զերկուս տաւնս տաւնել սուրբ առաքեալն Յակոբոս*. զի նոյն էր քանի[1] ամսոյն, թէպէտ և ո՛չ նոյն պատկեր աւուրն. զի ծնունդն յուրբաթու էր և մկրտութիւնն ի կիրակէի. Եւ դարձեալ զի մի էր խորհուրդ անախտ ծննդեանն և մկրտութեանն, վասն այն ի միասին եդին առաքեալքն. Սոյնպէս Կիւրղոս[2] կարգեաց յընթերցուածին զաւետարանն[3] ծննդեանն, որ ըստ Ղուկա[4]. Եւ հովիւք[5] էին ի տեղիջն[6]**, և զՄաթէոսին[7]. Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդ էր այսպէս***. և աւետարան չէ եդեալ մկրտութեան յընթերձուածին[8] առ ի հաստատել[9], զի միասին տաւնան[10] տաւնել. զի և յայտնի է աւետարան աւուրն, բայց առաքեալ միենոյն է երեկոյին և վաղուին[11], և սաղմոս Տէր ասաց ցիս, որդի իմ ես դու, և առաքեալ. Քանզի երեւեցան[12] շնորհքն Աստուծոյ, առ ի պատիւ տաւնից՝ զմի ունել խորհուրդ. զի որպէս ծնունդն էր հոգովն[13], նոյնպէս և մկրտութիւն հոգովն[14], և աւետիքն հոգւով. և աւրն[15] չորեքշաբաթ. Յաւետեացն մինչ ի[16] ծնունդն Թ. ամիս է և Ե. աւր, ըստ աւրինակի անդարնկի. այլ յոյնք և վիրք, որ յայսմանէ բաժանին՝ ի պապանձմանէն[17] Զաքարիայի թուեն, և ոչ ի կատարմանէ[18] տաւնին՝ ի Ժ. երրորդէ[19] ի թշրին ամսոյ և ոչ ի ԻԲ. նոյն ամսոյ, զի ըստ նոցա ի մարտի ի ԻԵ աւետիքն է և ի դեկտեմբերի ի ԻԵ[20] ծնունդն. Արդ, թէպէտ և պատ-

1. Ա. Ապողինարին.
2. ախտանայցէք.
3. այլ է.
4. հոգւոյ.
5. արդեօք կան.
6. այլ երկու.
7. իմաստուն.
8. ուղիղ բանի.
9. Ա. հասանելոյ.
10. պայծառութեան.
11. մնայ.
12. առանձնաւորութիւնն.
13. զաղօտացուցին.
14. բնութեանն.
15. Ա. անզանազան.
16. զտօն ծննդեանն.
17. գրեալ է յաւետարանն Ղուկաս.
18. առաքելոյ.
19. յունվարի վեցն տօն ծննդեան եւ յայտնութեան.
20. Ա. Յակոբոս Տեառն եղբայրն. Բ. Յակովբոս.
21. Կիւրեղ.
22. եօթն.
23. Ս. ի.

* Այստեղ մի ամբողջ երես բաց է մնացել, որի վերայ օտար խիստ անճոռնի ձեռքով գրուել է մի քիչ որ զրոյց Անովս եպիսկոպոսի մասին, թէ «աստեղծող կր հրօնաւորաց» եւ պատմուեցաւ.

1. քանիք.
2. Կիւրղոս.
3. զաւետարան.
4. Ղուկայ.
5. հովիւքն.
6. ի տեղոջն.
7. Ա. զՄատթէոսի.
8. յընթերցուածին.
9. առ ի հաստատել.
10. տօնս.
11. Ա. ի վաղուեան. Բ. ի վաղուեանն.
12. երեւեցաւ.
13. հոգւով.
14. մկրտութիւնն հոգւով.
15. այն.
16. մինչեւ ի.
17. ի պապանձմանէն.
18. ի կատարմանէն.
19. ի Ժ. երորդ.
20. դեկտեմբերի ԻԵ.

** Ղուկ. Բ. 3.
*** Մատթ. Ա. 18.

ճառեն վասն սուրբ տեղեացն [1], յԵրուսաղեմ [2] յիւրաքանչիւր տեղիսն կատարել զտաւնսն՝ զծնունդն Բեթղահեմ [3] և զմկրտութիւնն ի Յորդանան, այլ Կիւրղոս [4] ցուցանէ ի Դուիթի և Յակոբայ տաւնն ասելով. Զոր յայլ քաղաքս ծնունդ առնեն. ուստի յայտ է, թէ յառաջ եղև բաժ ... [5] տաւնիցն յաղանդոյն Արտեմոնի ..., [6] վասն այսորիկ ժողով լինի, գրեալ է ի կանոնս զնոյն հաստատէ և ժողովն Քաղկեդոնի. Եւ զտաւնիցն բաժանումն [7] ցուցանէ աբբա [8] Եփրեմի [9]՝ հարցեալ յաշակերտացն, այսպէս ասելով, թէ սովոր էին յոյնք ի դեկտեմբերի ԻԵ տաւն առնել [10] արեգականն, յորժամ առնոյր տիւն ի գիշերէն [11], զոր հարսանիս արեգակ [12] անուանէին՝ կարգեցին զտաւնն Ծննդեանն [13] յայնմ տեղւոջ, առ ի խափանել զայն սովորութիւնն [14]. Եւ զի թէպէտ բամբասեն զմեզ չտաւնել զաւետիսն՝ այնպէս իմացին. թէ [15] զաւետիսն չտաւնեմք, զիա՞րդ և զծնունդն. այլ զի ոչ ընդ յոյնս և ընդ վիրս տաւնեմք, յայտնի է պատճառն. զի Յակոբոս և Կիւրեղ [16] այնպէս կարգեցին, զի ընդ տաւնի ծննդեանն և յայտնութեանն եղին. զի չէր յայտնի աւետիքն մինչ ի կատարումն ծննդեանն, և կուսին միայն ետ զաւետիսն հրեշտակն, և նա ընդ բանսն խռովեցաւ, և Յուսէփ [17] երկմտեցաւ. Արդ, իբրև խորհուրդ աւետեացն կատարեցաւ, ապա տաւնեցաւ՝ ի չորրորդ աւուրն, խորհրդաբար. զի աւետիքն ի չորեքշաբաթու [18] էր. Եւ գործեալ մեր լուսաւորիչն Գրիգորիոս զաւետեաց տաւնն՝ առ ի խափանել զմոլորութիւն, զոր տաւնէին Անահիտ տիկնոջն, անդ ետ ի Նաւասարդի ԺԵ. զայն ի Զ. [19] ապրիլի, ըստ Թուոյ աւուրց, և ոչ ի մարտի ԻԵ, որպէս կարգեալ է Արտեմոնի և հաստատեալ Յորնաղայ. Երրորդ անգամ տաւնեմք ի տաւնի փոխման Մարիամու Աստուածածնի [1], յերկրորդ աւուրն: Բայց գիտեմք, զի ասէք թէ յորմէ հետէ ... [2] ապրիլի՝ անդ ընդէ՞ր ոչ տաւնէք. ցուցաք զպատճառն, զի այնպէս կարգեցաւ ... [3] Յակոբայ և ի Կիւրղէ [4] ընդ ծննդեա .... [5] յոյնք, առ ի խափանելն [6] զտաւնն հարսանեաց արեգականն՝ զծնունդն անդ փոխեցին, նոյն բան է և վասն աւետեացն, և թէ հա . . . [7] . . . Բ.Ժ. աւուրն ի մէջ ծննդեանն և մկրտութեանն՝ արժան էր [8] զկնի Լ. ամի տաւնել մկրտութեանն [9]: Եւ թէ զայն ևս պատճառեն թէ նախ թլփատութիւն [10] էր և ապա մկրտութիւն [11], այլ զայս գիտասցեն, զի մի էր խորհուրդ մկրտութեանն և թլփատութեանն.

(Շարունակելի)

---

1. Ա. տեղեաց.
2. Երուսաղեմի.
3. Ա. ի Բեթլեհեմ Բ. Բեթլեհեմ.
4. Կիւրղոս.
5. բաժանումն.
6. եւ.
7. զսոնից բաժանումն.
8. աբբայ.
9. Եփրեմ.
10. տօնել.
11. Ա. ի գիշերէ.
12. արեգական.
13. զտօն ծննդեանն.
14. սովորութիւն.
15. զի թէ.
16. Կիւրեղ.
17. Յովսէփ.
18. Ա. չորեքշաբթի.
19. զայն որ է է.

---

. Աստուածածնին.
2. յէ է.
3. ի սրբոյն.
4. ի Կիւրղէ.
5. ծննդեանն: Եւ զի որպէս.
6. առ ի խափանել.
7. հարկաւոր կարծեն զերկոտասան.
8. Բ. արժան է.
9. Ա. Օ. արժան էր—մկրտութեանն.
10. թլփատութիւնն.
11. մկրտութիւնն.
12. Նուէան.
13. Օ.
14. անցուցեալ.